

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2011թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 414339 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ)¹, ինչը 2010թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 15.5%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

մարդ

	2010 թ. հունվար- սեպտեմբեր	2011 թ. հունվար- սեպտեմբեր	Տեսակարար կշիռը (2011թ. հունվար- սեպտեմբեր,%)	Աճի տեմպը, %
Ընդամենը զբոսաշրջիկներ²	358664	414339	100.0	115.5
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական	100321	86646	20.9	86.4
հանգստի և ժամանցի	198677	281545	68.0	141.7
բուժման	35972	18340	4.4	51.0
այլ	23695	27809	6.7	117.4

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

²Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: